ՀՀ պետական գործուղումների 2017-2018թթ. մոնիտորինգի արդյունքները

Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ N19757): Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան Կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

Նախաբան 2

Կառավարության աշխատակիցների գործուղումների քանակային մոնիտորինգ 3

Դիագրամ 1. 2017թ. մայիսի 7-ից մինչև 2018թ. մայիսի 28-ը ընկած ժամանակահատվածում Կառավարության աշխատակիցների գործուղման օրերի թիվը (օր) 3

Կառավարության մարմինների գործուղումների քանակային մոնիտորինգ 4

Դիագրամ 2. 2017թ. մայիսի 7-ից մինչև 2018թ. մայիսի 28-ը ընկած ժամանակահատվածում Կառավարության մարմինների գործուղումների կառուցվածքը (%) 4

Դիագրամ 3. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործուղումների կառուցվածքը (%) 5

Գնված ավիատոմսերի վերաբերյալ արժեքային մոնիտորինգ 8

Գրաֆիկ 1. Ավիատոմսերի գնման դինամիկան ըստ ամիսների, 2017-2018թ. (մլն. դրամ) 8

Գնված ավիատոմսերի մոնիտորինգ, ըստ ամիսների 9

Աղյուսակ 1. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (մայիս ամիս, 2017թ.) 9

Աղյուսակ 2. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածքը (հունիս ամիս, 2017թ.) 10

Աղյուսակ 3. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (հուլիս ամիս, 2017թ.) 11

Աղյուսակ 4. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (օգոստոս ամիս, 2017թ.) 12

Աղյուսակ 5. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածքը (սեպտեմբեր ամիս, 2017թ.) 13

Աղյուսակ 6. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (հոկտեմբեր ամիս, 2017թ.) 14

Աղյուսակ 7. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (նոյեմբեր ամիս, 2017թ.) 15

Աղյուսակ 8. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (դեկտեմբեր ամիս, 2017թ.) 16

Աղյուսակ 9. Ավիատոմսերի ծախսերի կառուցվածքը (հունվար ամիս, 2018թ.) 17

Աղյուսակ 10. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (փետրվար ամիս, 2018թ.) 18

Աղյուսակ 11. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (մարտ ամիս, 2018թ.) 19

Աղյուսակ 12. Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (ապրիլ ամիս, 2018թ.) 20

Գնված ավիատոմսերի ամփոփիչ մոնիտորինգ, 2018թվական 21

Աղյուսակ 13. Պետական կառույցների ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (01.05.2017թ.-30.04.2018թ.) 22

POLICYOBSERVER NCPPR

Նախաբան

Համաշխարհային հարթակում կապերի ամրապնդումը էական դեր է կատարում ցանկացած երկրի տնտեսության մեջ: Ժամանակակից գլոբալիզացված իրականությունում, մեծ է երկրների միջև փոխկախվածությունը, որը առաջացնում է համագործակցելու և կապերի ընդլայնման անհրաժեշտություն՝ գործուղումների միջոցով:

Մոնիտորինգի նպատակն է բացահայտել և վերլուծել ՀՀ պետական գործուղումների կառուցվածքային առանձնահատկությունները և ընդհանուր միտումները: Սույն հրապարակման մեջ ամփոփված են 2017 թվականի մայիսի 7-ից մինչև 2018 թվականի մայիսի 28-ը պետական մարմինների կողմից կատարված գործուղումների, ավիատոմսերի ձեռքբերման հետ կապված ծախսերի քանակային և արժեքային մոնիտորինգի արդյունքները: Նշված ժամանակահատվածում, համաձայն «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի, ՀՀ-ում պետական մարմինների կողմից իրականացված գործուղումների ավիատոմսերի ընդհանուր արժեքը կազմել է 1,2 մլրդ ՀՀ դրամ:

Կառավարության աշխատակիցների գործուղումների քանակային մոնիտորինգ

Համաձայն e-gov.am կայքի տվյալների, Կառավարության աշխատակիցների կողմից իրականացված ընդհանուր գործուղումների մեջ ամենաերկար ժամանակահատվածով գործուղումներ են իրականացրել հետևյալ աշխատակիցները. Վաչե Գաբրիելյան՝ 68 օր, Հայկ Արզումանի Հարությունյան՝ 44 օր, Վահան Մարտիրոսյան՝ 39 օր, Աշոտ Մանուկյան՝ 37 օր և Զարմինե Զեյթունցյան 36 օր (Դիագրամ 1): (https://www.e-gov.am/trips/page=1/ 2018) Վերը նշված անձանց (132 աշխատակիցներից՝ 5-ը) գործուղումների օրաքանակի հանրագումարը կազմում է ընդհանուր գործուղումների գրեթե 16,5%-ը:

Դիագրամ 1. *2017թ. մայիսի 7-ից մինչև 2018թ. մայիսի 28-ը ընկած ժամանակահատվածում Կառավարության աշխատակիցների գործուղման օրերի թիվը (օր)*



Կառավարության մարմինների գործուղումների քանակային մոնիտորինգ

Ըստ կայքում ներկայացված տվյալների առանձնացրել ենք առավել հաճախակի գործուղումներ մեկնած մարմիններին.

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն,
- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն,
- ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Նշված կառույցների գործուղումները կազմել են ողջ գործուղումների գրեթե կեսը՝ 46% (Դիագրամ 2):

Դիագրամ 2. *2017թ. մայիսի 7-ից մինչև 2018թ. մայիսի 28-ը ընկած ժամանակահատվածում Կառավարության մարմինների գործուղումների կառուցվածքը (%)*



Դիագրամ 2-ից երևում է, որ առավել ակտիվ գործուղումներ իրականացրած մարմինը ***ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն է***՝ 219 օր կամ ընդհանուր գործուղումների 16,2%-ը: Առավել հաճախ գործուղվել են հետևյալ աշխատակիցները՝ Զարմինե Զեյթունցյան 36 օր, Հովհաննես Ազիզյանը՝ 30 օր և Մեխակ Ապրեսյանը՝ 29 օր (Դիագրամ 3):

Դիագրամ 3. *ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության գործուղումների կառուցվածքը (%)*



Ըստ գործուղումների ագրեգացված տևողության հաջորդը ***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է***՝ 119 օր գործուղումների հանրագումարային տևողությամբ, որը կազմում է ընդամենը գործուղումների 8,8%-ը: Առավել հաճախ գործուղվել է Դավիթ Տոնոյանը 27 օր, Բագրատ Վարդազարյանը՝ 21 օր և Կարեն Բաբայանը՝ 18 օր:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը իրականացրել է գործուղումներ 113 օր հանրագումարային տևողությամբ, որը կազմել է ընդհանուր գործուղումների 8,3%-ը: Առավել հաճախ գործուղվել են Վահան Մարտիրոսյանը՝ 39 օր (35% ընդամենը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության գործուղումների կառուցվածքում), Գագիկ Գրիգորյանը՝ 18 օր (16%) և Արման Խաչատրյանը՝ 15 օր (13%):

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը իրականացրել է գործուղումներ 98 օր հանրագումարային տևողությամբ, որը կազմել է ընդհանուր գործուղումների 7,2%-ը: Առավել շատ գործուղել են Աշոտ Մանուկյանը՝ 37 օր (37,8% ընդամենը ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գործուղումների կառուցվածքում), Հայկ Արզումանի Հարությունյանը՝ 44 օր (44,9%) և Վարդան Գևորգյանը՝ 9 օր (9,2%):

Համաձայն ՀՀ Էլեկտրոնային Կառավարման պաշտոնական կայքի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմը իրականացրել է գործուղումներ հանրագումարային 83 օր տևողությամբ, կազմելով ընդհանուրի 6,1%-ը: Առավել հաճախ

POLICYOBSERVER NCPPR

գործուղել են Արմեն Հարությունյանը՝ 32 օր (39% ընդամենը ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործուղումների կառուցվածքում), Իգնատի Առաքելյանը՝ 26 օր (31%) և Ռոբերտ Մակարյանը՝ 6 օր (7%):

POLICYOBSERVER
NCPPR

Գնված ավիատոմսերի վերաբերյալ արժեքային մոնիտորինգ

Կատարելով հետազոտություն, 2017 թվականի մայիսի 1-ից մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում գնված ավիտամոսերի վերաբերյալ, որը չի արտացոլում ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության կարիքների համար և Ազգային անվտանգության խորհրդի անդամների համար գնված ավիտամոսերի տեղեկությունները, առկա տվյալների համաձայն, նկատելի պիկեր երևում են մարտ ամսին, ինչպես նաև սեպտեմբերից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում, իսկ առավել նվազ ծախսեր նկատվում են ձմռան ամիսներին (դեկտեմբեր-փետրվար), հարկ է նշել նաև ավիատոմսերի կտրուկ նվազման միտում ապրիլ ամսում, ինչը կարելի է կապել առկա կառավարչական կառուցվածքային փոփոխությունների հետ:

Գրաֆիկ 1. *Ավիատոմսերի գնման դինամիկան ըստ ամիսների, 2017-2018թ. (մլն. դրամ)*



POLICYOBSERVER
NCPPR

Գնված ավիատոմսերի մոնիտորինգ, ըստ ամիսների

Աղյուսակ 1. *Ավիատոմսերի ծախսերի կառուցվածք (մայիս ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*13.5*	*13.9%*
2. ՀՀ ԱԳՆ	*8.4*	*8.6%*
3. ՀՀ Ոստիկանություն	*6.0*	*6.2%*
4. Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց	*5.4*	*5.6%*
5. Կամերային երաժտության ազգային կենտրոն ՊՈԱԿ	*5.4*	*5.6%*
Հանրագումարը	**38.9**	**39.9%**
Ընդամենը	**97.6**	**100%**

Ընդամենը մայիս ամսին կատարվել է 97.6 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի առք, որտեղ գերակշիռ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (13.9%), ՀՀ ԱԳՆ (8.6%), ՀՀ Ոստիկանություն (6.2%), Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոց (5.6%) և Կամերային երաժտության ազգային կենտրոն ՊՈԱԿ (5.6%):

Աղյուսակ 2. *Ավիատոմսերի ծախսերի կառուցվածքը (հունիս ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*36.0*	*29%*
2. ՀՀ ԱԳՆ	*11.7*	*9.4%*
3. ԵՊՀ	*7.5*	*6%*
4. ՀՀ Ոստիկանություն	*6.7*	*5.4%*
5. Արվեստների հայկական խորհուրդ ՀԿ	*5.1*	*4%*
Հանրագումարը	**67.6**	**53.8%**
Ընդամենը	**125.3**	**100%**

Հունիս ամսին կատարվել է 125.3 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի առք, ընդ որում առավել մեծաքանակ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (29%), ՀՀ ԱԳՆ (9.4%), ԵՊՀ հիմնադրամ (6%), ՀՀ Ոստիկանություն (5.4%) և Արվեստների հայկական խորհուրդ ՀԿ (4%): Վերը նշված 5 պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի ավելին քան կեսը՝ 53.8%-ը:

POLICYOBSERVER NCPPR

Աղյուսակ 3. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (հուլիս ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*24.3*	*27%*
2. ՀՀ ԱԳՆ	*8.0*	*8.9%*
3. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	*5.1*	*5.7%*
4. Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱ	*4.2*	*4.8%*
5. ԵՊՀ հիմնադրամ	*3.6*	*4%*
Հանրագումարը	**45.4**	**50.4%**
Ընդամենը	**90.4**	**100%**

2018 թվականի հուլիս ամսին կատարվել է 90.4 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի գնում, որտեղ առավել մեծաքանակ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (27%), ՀՀ ԱԳՆ (8.9%), Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ (5.7%), Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱ (4.8%) և ԵՊՀ հիմնադրամ (4%): Վերը նշված պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի կեսը՝ 50.4%-ը:

Աղյուսակ 4. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (օգոստոս ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*58.7*	*50.1%*
2. Երևանի քաղաքապետարան	*7.9*	*6.8%*
3. ՀՀ ԱԳՆ	*5.5*	*4.7%*
4. ՀՀ Ոստիկանություն	*4.9*	*4.2%*
5. Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ	*3.2*	*2.8%*
Հանրագումարը	**80.2**	**68.6%**
Ընդամենը	**117**	**100%**

2018 թվականի օգոստոս ամսին կատարվել է 117 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի գնում, որտեղ գերակշռող կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (50.1%), Երևանի քաղաքապետարան (6.8%), ՀՀ ԱԳՆ (4.7%), ՀՀ Ոստիկանություն (4.2%) և Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ (2.8%): Վերը նշված պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսերի երկու երրորդը՝ 68.6%:

POLICYOBSERVER NCPPR

Աղյուսակ 5. *Ավիատոմսերի ծախսերի կառուցվածքը (սեպտեմբեր ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*37.0*	*26.8%*
2. Աշխատանքային ռեզերվներ ՄՀԿ	*9.9*	*7.1%*
3. ՀՀ ԱԳՆ	*7.8*	*5.7%*
4. Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն ՊՈԱԿ	*7.4*	*5.4%*
5. Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ ՊՈԱԿ	*5.9*	*4.3%*
Հանրագումարը	**68.1**	**49.3%**
Ընդամենը	**138.4**	**100%**

Ընդամենը սեպտեմբեր ամսին կատարվել է 138.4 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի առք, որտեղ գերակշիռ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (26.8%), Աշխատանքային ռեզերվներ ՄՀԿ (7.1%), ՀՀ ԱԳՆ (5.7%), Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն ՊՈԱԿ (5.4%) և Հայաստանի էստրադային ջազ-նվագախումբ ՊՈԱԿ (4.3%): Վերը նշված 5 պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի գրեթե կեսը՝ 49,3%:

Աղյուսակ 6. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (հոկտեմբեր ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*29.2*	*21.2%*
2. Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	*15.3*	*11%*
3. Կամերային երաժշտության ազգային կենտրոն ՊՈԱԿ	*13.9*	*10.1%*
4. ՀՀ ՊԵԿ	*5.9*	*4.3%*
5. Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	*4.5*	*3.3%*
Հանրագումարը	**68.8**	**50%**
Ընդամենը	**138**	**100%**

Հոկտեմբեր ամսին կատարվել է 138 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի առք, ընդ որում առավել մեծաքանակ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (21.2%), Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ (11%), Կամերային երաժշտության ազգային կենտրոն ՊՈԱԿ (10.1%), ՀՀ ՊԵԿ (4.3%) և Հայաէրոնավիգացիա ՓԲԸ (3.3%): Վերը նշված 5 պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի 50%-ը:

POLICYOBSERVER NCPPR

Աղյուսակ 7. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (նոյեմբեր ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*39.8*	*29.8%*
2. Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	*21.3*	*15.9%*
3. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	*20.4*	*15.3%*
4. Երևանի քաղաքապետարան	*4.9*	*3.7%*
5. ՀՀ ԱԳՆ	*4.1*	*3.1%*
Հանրագումարը	**90.5**	**67.8%**
Ընդամենը	**133.6**	**100%**

2018 թվականի մարտ ամսին կատարվել է 133.6 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի գնում, որտեղ առավել մեծաքանակ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (29.8%), Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ (15.9%), Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ (15.3%), Երևանի քաղաքապետարան (3.7%) և ՀՀ ԱԳՆ

POLICYOBSERVER NCPPR

(3.1%): Վերը նշված պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի 67.8%:

Աղյուսակ 8. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (դեկտեմբեր ամիս, 2017թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*19.0*	*33.8%*
2. Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱ	*6.0*	*10.8%*
3. Երևանի քաղաքապետարան	*5.0*	*8.8%*
4. ՀՀ ԱԳՆ	*3.0*	*5.3%*
5. «Սիվիլ Արտ» մշակութային հասարակական կազմակերպություն	*2.3*	*4.1%*
Հանրագումարը	**35.3**	**62.9%**
Ընդամենը	**56.2**	**100%**

2018 թվականի դեկտեմբեր ամսին կատարվել է 56.2 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի գնում, որտեղ գերակշռող կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (33,8%), Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱ (10,8%), Երևանի քաղաքապետարան (8,8%), Հ ՀՀ ԱԳՆ (5,3%) և «Սիվիլ Արտ» մշակութային հասարակական կազմակերպություն (4,1%): Վերը

POLICYOBSERVER NCPPR

նշված պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսերի մեկ երրորդը՝ 62,9%:

Աղյուսակ 9. *Ավիատոմսերի ծախսերի կառուցվածքը (հունվար ամիս, 2018թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*8.8*	*20.5%*
2. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	*6*	*14%*
3. ՀՀ ԱԳՆ	*3.7*	*8.6%*
4. Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	*2.9*	*6.7%*
5. ՀՀ նախագահի աշխատակազմ	*1.9*	*4.4%*
Հանրագումարը	**23.3**	**54.2%**
Ընդամենը	**43.6**	**100%**

Ընդամենը հունվար ամսին կատարվել է 43.6 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի առք, որտեղ գերակշիռ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (21%), Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ (14%), ՀՀ ԱԳՆ (8.6%), Հայաէրոնավիգացիա ՓԲԸ (6.7%) և

POLICYOBSERVER NCPPR

նախագահի աշխատակազմ 4.4 %: Վերը նշված 5 պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի գրեթե կեսը՝ 49%:

Աղյուսակ 10. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (փետրվար ամիս, 2018թ.)*

Պետական կառույցի անվանում	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)*
1. ՀՀ ՊՆ	*9.9*	*12.5%*
2. ՀՀ ԱԳՆ	*7.6*	*9.6%*
3. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	*5.1*	*6.5%*
4. ՀՀ Ոստիկանություն	*4.5*	*5.7%*
5. Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	*4.2*	*5.3%*
Հանրագումարը	**31.3**	**39.6%**
Ընդամենը	**79.3**	**100%**

Փետրվար ամսին կատարվել է 79.3 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի առք, ընդ որում առավել մեծաքանակ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (12,5%), ՀՀ ԱԳՆ (9.6%), Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ (6.5%), ՀՀ Ոստիկանություն (5.7%) և Հայաէրոնավիգացիա ՓԲԸ

POLICYOBSERVER NCPPR

(5.3%): Վերը նշված 5 պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի 37.8%-ը:

Աղյուսակ 11. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (մարտ ամիս, 2018թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում (%)*
1. Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ ՊՈԱԿ	*23.1*	*15.3%*
2. Կամերային երաժշտության ազգային կենտրոն ՊՈԱԿ	*14.1*	*9.4%*
3. ԱԳՆ	*12.5*	*8.3%*
4. Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա	*10.2*	*6.8%*
5. ՀՀ ՊՆ	*7.8*	*5.1%*
Հանրագումարը	**67.7**	**44.8%**
Ընդամենը	**151.2**	**100%**

2018 թվականի մարտ ամսին կատարվել է 151.2 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի գնում, որտեղ առավել մեծաքանակ կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ ՊՈԱԿ (15.3%), Կամերային երաժշտության ազգային կենտրոն ՊՈԱԿ (9.4%), Արտաքին գործերի նախարարություն (8.3%), Դպրոցականների հանրապետական

POLICYOBSERVER NCPPR

մարզական ֆեդերացիա (6.8%) և ՀՀ ՊՆ (5.1%): Վերը նշված պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսի 44.8%:

Աղյուսակ 12. *Ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (ապրիլ ամիս, 2018թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*9.2*	*13.4%*
2. ԱԳՆ	*4.8*	*7%*
3. ԵՊՀ	*3.1*	*4.6%*
4. ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ ՊՈԱԿ	*3*	*4.4%*
5. Այլ կրթական հիմնադրամ	*2.9*	*4.2%*
Հանրագումարը	**23**	**33.5%**
Ընդամենը	**68**	**100%**

2018 թվականի ապրիլ ամսին կատարվել է 68 միլիոն ՀՀ դրամի ավիատոմսերի գնում, որտեղ գերակշռող կառուցվածքային ծախսեր ավիատոմսերի գծով կատարվել է հետևյալ կառույցների կողմից՝ ՀՀ ՊՆ (13.4%), ԱԳՆ (7%), ԵՊՀ (4.6%), ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ ՊՈԱԿ (4.4%) և Այլ

POLICYOBSERVER NCPPR

կրթական հիմնադրամ (4.2%): Վերը նշված պետական կառույցների ծախսը կազմել է ողջ ավիատոմսերի ծախսերի մեկ երրորդը՝ 33.5%:

Գնված ավիատոմսերի ամփոփիչ մոնիտորինգ, 2018թվական

Վերջին մեկ տարվա կտրվածքով (2017 թվականի մայիս ամսից մինչև 2018 թվականի ապրիլ ամիս ներառյալ) կատարվել է ընդամենը 1.2 միլիարդ ՀՀ դրամ արժողությամբ ավիատոմսերի գնում: Գնումների գերակշռող մասը կատարվել է ՀՀ ՊՆ կողմից՝ 335.8 միլիոն դրամ ընդամենը արժողությամբ՝ 27.1% կշռով: Ըստ գնումների տեսակարար կշռի աչքի են ընկնում նաև ՀՀ ԱԳՆ՝ 80 միլիոն ՀՀ դրամ կամ 6.5% և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ-ը՝ 48 միլիոն ՀՀ դրամ կամ 4%: Ընդամենը ծախսերի ուղիղ կեսը կատարվել է ստորև նշված պետական կառույցների կողմից (Աղյուսակ 13).

POLICYOBSERVER
NCPPR

Աղյուսակ 13. *Պետական կառույցների ավիատոմսերի ծախսի կառուցվածքը (01.05.2017թ.-30.04.2018թ.)*

Մարմինը	*Ֆինանսավորման արժեքը (մլն ՀՀ դրամ)*	*Մասնաբաժինը (%)*
1. ՀՀ ՊՆ	*335.8*	*27.1%*
2. ՀՀ ԱԳՆ	*80.3*	*6.5%*
3. Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ	*48.8*	*3.9%*
4. ԵՊՀ հիմնադրամ	*42.5*	*3.4%*
5. ՀՀ Ոստիկանություն	*40.5*	*3.3%*
6. Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	*36.6*	*3%*
7. ՀՀ ՊԵԿ	*34.1*	*2.7%*
Հանրագումար	**618.6**	**50%**
Ընդամենը	**1239.9**	**100%**

POLICYOBSERVER NCPPR